ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ
ԵՒ ԴՐԱՄ
ՂՐԿԵԼՈՒ ՀԱՍՑԷ
M. BENIARD.
22, Ormiston Road,
Shepherd's Bush.
London, W. [Angleterre]

Ամէն բան ժողովրդի միջոցով, ժողովրդի կամքով եւ ժողովրդի համար:

Իւրաքանչիւրի եւ ընդհանուրի համատարածես բարեկեցիկ կեանք — դա է ճշմարիտ ազատութիւն:



ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
ԱՄԵՆ ՏԵՂԻ ՀԱՄԱՐ
ՏԱՐԵԿԱՆ ...... 5 Ֆր.
ԿԷՍ ՏԱՐԻԱՆ ... 3 „
ՄԻ ՀԱՄԱՐԸ ... 1/2 „

Ժողովո՛ւրդ, դու ինքդ միայն կարող ես ձեռք բերել քո ազատութիւնը:

Արեան ճահիճներ — ահա ազատութեան ճանապարհը:

Ժողովո՛ւրդ, մի՛ աղերսիր, այլ պահանջիր եւ ձեռք բեր

ԵՐԳԻԾԱԲԱՆԱԿԱՆ — ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ

ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ | ԼՈՆԴՈՆ | Nr 5. ՍԵՊՏԵՄԲԵՐ. Nr 5. | 1896 | ՄԻԱՄՍԵԱՅ

ԱՄՍՈՒԱՆ ԵՐԵՒՈՅԹՆԵՐԻՑ.

Նրանք սկսել են պոռալ, այդ Նորաձագ աղմկայոյզները, պոռալ, պոռոչտալ յոլդերին յատուկ աղմուկով: Ի՞նչ է պատահել... Մե՜ծ գիւտ: Մեր հայ Նախաջըհեղեղեան „դիւանագէտներից" յետոյ դեղնած „յեղափոխականներն" արել են այդ գիւտը: Նրանք ներկայացնում են իրանց տրամաբանութիւնը հետեւեալ կերպով. — „Մենք այսօր մեր ամբողջ յոյսը պէտք է դնենք դիւանագիտութեան վրայ... սակայն այդ դիւանագիտութիւնը վստահելի մարմին չէ:" Դա ճիշդ եւ ճիշդ համապատասխանում է միւս ռմբակոծական աղմկայոյզների տրամաբանութեան, որոնք ասում են. — „Մենք պէտք է ազատենք հայ ազգը... կոտորել տալով նրան"...

* * *

Այն, ինչ ամենահետաքրքրականն է, դա՝ ռմբակոծականների մեծ զարմանքը. — Նրանց փոքրաքանակ ռումբերը յանկարծ հարիւրաւոր ձագուկներ են բերում մէկ օրւայ մէջ... շնորհով Նազըմ փաշայի.... Կ. Պօլսում այժմ ռումբային ցուցահանդէս կայ... կարգաւորված ու հաստատված սուլթանական վերին խնամքով...

* * *

Մեր հայ նորատեսակ „ռմբաձիգները" նոյն րոպէին, երբ հայերը կոտորվում էին, բանակցութեան համար օսմանեան բանկա եկած ռուս ու ֆրանսիական պաշտօնեաներին հետեւեալ պայմանը դրին. — „Տըւէք մեզ անձնական ապահովութիւն, հանելով մեզ Կ. Պօլսից դուրս ազատ երկիր, եւ մենք անձնատուր կը լինենք... Այլապէս համաձայն չենք... եւ կեցցէ՜ ազատութիւն, մա՜հ Թշնամուն....„ Այդպէս էլ եղաւ. „ռմբաձիգներն" ազատվեցան... եւ անցան ազատ երկիր... Հանգի՜ստ ոսկերացն տասնեւհինգ հազարի. ամէն:

* * *

Անցեալ օր „Մեծ մարդ" դիւանագէտ-Չերազն իր Թերթում յայտնում էր իր խորին զարմանքը եւ սքանչացումը, որ ռըմբակոծականները համարձակ միտք յղացան յարձակում գործել օսմանեան դրամատան վրայ: Նա աւելացնում է, որ այդ երեւելի գործը հանդիսանում է յեղափոխական ձեռնարկների գլուխ գործոցը:

Եւ յիրաւի... բերդեր վերցնելը, դիւանագէտ հայի կարծիքով, այնքան „ըսքանչելի" գործ չէ, ոըքան մի դրամատուն...

Չի լինում էլի՜. մի կարգ հայեր կան, որոնց արտաքին կեղեւը կամ մորթը — ի՛նչ տեսակ փայլուն էլ լինի դա — եթէ քերթես, միշտ դրա տակ առանձին քնքոյշ զգացում կը գտնես դէպի ոսկէ մետաղը...

ՆՈՐ ՅՈՒԴԱՆ.

Շընորհիւ անձրեւի
Եւ տաքուկ արեւի՝
Ոսկէ հունձն այս տարի
Առատ է ու բարի:

Երեսն է միշտ արդար ու մէկ,
Գոյնն է Թէեւ հազար ու մէկ,
Թէ՛ կարմիր, Թէ՛ սպիտակ —
Կայ Թաքուն նըպատակ:
Մինչ արտաքուստ միատեսակ՝
Նա միշտ ունի պարարտ քըսակ:
Շիտակ մարդն կը վախի
Այդ վատէն, կը փախի,
Կը խորշի,
Կը զարշի՝
Միշտ ըզգոյշ, մըտահոգ...
Որու՜ն հոգ, որո՜ւն հոգ.
Յուդան ունի մեծ նեցուկ,
Պղտոր ջըրէն որսայ ձուկ:

* * *

Շընորհիւ սուլթանի
Նա միշտ բաղդ գըտանի.
Ե՞ր ըլլալ պարզ մըշակ,
Երբ Թաքուն կայ փէշակ:

Երբ կեանքի մէջ իրեն ցուցուց
Ազատամիտ զլուխ ձեւացուց,
Տուաւ իրեն „գըրագէտ"
Անունը խորագէտ:
Սակայն պոռաց՝ „մեղա՛յ, մեղա՛յ,
Կըլլամ մօլլա եւ աբեղայ",
Երբ բանտով վախցուցին,
Ոսկիներ խաղցուցին:
Դաւ փորձեց,
Վատ գործեց,
Ձեւացուց երկերես.
Իր հոգի՞ն է:.. ի՞նչ երես —
Ազատամիտ՝ մարդոց քով
Եւ ղաւաղի՝ իր գործքով:

* * *

Շընորհիւ դիմակի,
Ոսկեզարդ կնակի՝
Ծըլպիտ է ճէզուիթի,
Խորհուրդը՝ սառը ուխտի:

Մէկ տխմարին քըսան տխմար
Խունկ ծըխեցին՝ զովք անհամար.
Վըրան հագուստ կար կարմիր,
Խօսքն էր „մի՛ կարկամիր,
Ազատ գործէ՛ Թշնամու դէմ":
Թշնամին էր ո՛չ ժանտաղէմ
Սուլթանը կամ վատը,
Այլ Թէ հայ անհատը. —
Ուխտը կար
Ապիկար:
Նոր մորթն էր գունաւոր,
Ինչպէս միշտ՝ նորանոր...
Ա՜հ, ինչ հոգն է Յուդայի
Փրկութիւնը խեղճ հայի...

* * *

Շընորհիւ իր դաւի
Իր մեղքը կը քաւի
Ալլահի դէմ Յուդան,
Որ ներեց մեծ սուլթան:

Եւ զզուելի այն բերանը, —
Որ փրկութեան սուրբ խորանը
Իր դաւով կը քանդէ, —
Հառաչով կը տենդէ,
Երբ հայրենեաց վրայ կը խօսէ
Եւ կամացուկ, „ըզգո՛յշ", կըսէ,
„Շուրջ ամեն աստիճան
Մատնիչ ու դաւաճան
Կը կեղծեն,
Կը գործեն"...
Այդ կըսէ չայլայլի,
Այլարցունքն կը փայլի...
Ո՜ անոր տէրն է սուլթան,
Նա նոր Յուդան է, Յուդան...

ԽԵՆԹԸ.

ՍՐՏԱՌՈՒՉ ԵՐԿԵԱԿ ՆԻՋԱԿԱԿՑՈՒԹԻՒՆ.

Մխիթարական երեւոյթներ են կատարւում աշխարհի վրայ: Ընկերութիւնների, կուսակցութիւնների եւ Դաշնակցութիւնների դար է: Մինչ Ռուսիոյ Ցարը շրջում է Եւրոպայ, բոլոր տէրութիւնների հետ գաղտնի դաշինքներ կազմելու, կեղծ Թերթի դիւանագէտներն էլ երկրագունտը տակն ու վրայ են անում, տիեզերական միութիւն հաստատելու համար: Ներկայացուցիչներ ամէն տեղ: Մէկը գնացել է Ամերիկա Միացեալ Նահանգների հետ դաշն կապելու, միւսը հասել է Հրոյ երկիր. Ֆիջիյցիներ, Կոլումբիացիներ, Բուշմէններ կաֆրներ եւ Պապուասներ միութեան են հրաւիրւած, կեղծ Թերթի ղօղանջով Յատուկ դիպլոմատներ ներկայացել են Սալսբիւրիին, Ցարին, Հօհէնլօհէյին, Գօլուխօվսկուն, մինչեւ Մավրերի Թագաւորանիստը, բոլորը միութեան տենդով բռնուած: Բոլորի դրօշի վրայ էլ գրուած է. „ամեն ոք ազատ է ըլլալ ինչ որ կուզէ." փրկութեան ժամը հնչել է:

Սակայն ընաշխարհիկ եւ պատուական քան այդ ամէն միութիւնները ու դաշինքները, սըրտառուչ քան բոլոր կապերը — կեղծ Թերթի եւ դաշնակցական դրօշակի միութիւնն է: Սիրահարուած մի զոյգ, որ երդուել է անխզելի միանալ, մինչեւ գերեզման, որը սակայն սպառնում է շուտով բաժանել սիրահարները: Բանակցութիւնները կարճ էին եւ հետեւանքը ազդու: Կեղծ Թերթը իւր ներկայացուցչի ձեռքով ուղարկեց պայմանագիրը:

„Հարաւ արեւմտեան կողմն երկրագնդի, սիրեցեալ դրօշակին սիրալիր ողջոյններ: Սենեակի մէջ, որ մեր ազատութեան ոստանն է, ներկայիս գրկուած ենք իրարու հետ նորակազմ տէրութեանս բոլոր զօրավարները: Խոր-

Հեցանք երկար մեր սիրելի ազգին վրայ և քննեցինք ամեն բան: Նախ գտանք որ մեզմէ ամենէն կուրճահասակի գանգին մէջ ուղեղի փոխարէն՝ սարդի ոստայն մը կայ և ամենէն յաղթանդամի ու ճարպոտի գանգին մէջ հաւեժական հրաշալիքներ: Խառնեցինք բոլոր խնդիրները և բոլոր հարցերը, սակայն անհնար եղաւ բան մը հասկնալ: Նոր կառավարութիւն մը կը հիմնենք, ազատ կացուցանելով մեզ ամեն խնդիրներէ, որք տնտեսական դըպրոցի մը կը պատկանին:

Ամենքս ալ ազատ ենք ըլլալ ընկերվարական կամ քաղքենի. հաւատացեալ կամ անտարբեր. հանրապետական կամ միապետական. տգէտ կամ գիտուն, փարիսեցի կամ մաքսաւոր. բայց ամենքս գործունէութիւնն ալ նուիրուած պիտի ըլլայ միայն և մի միայն ազգային դատին: Պիտի ջնջենք բոլոր տնտեսական դպրոցները և յատկապէս հնչակեան սոցիալիստները, վասնզի սոցիալիզմը չարիք մըն է, որ կսպառնայ ոչնչացնել հայ ազգը, զի եւրոպեան տէրութիւնները սոցիալիզմէն վախնալով՝ թողուցեր են մեզ երեսի վրայ: Սոցիալիզմը մեծ արգելք մըն է դիւանագիտութեան:

Վատ ժամանակների մէջ կապրինք, մեր տնտեսական խոհանոցն ալ մեզմէ պաշար կուզէ: Ահա այս ամենը, սիրելի ընկերներ, ներկայիս կը բերենք խառնելու ձեզ հետ, որմէ չափաւոր խառնուրդ մը գոյացնելով, կը յուսամք ապրել ու գործել, ի պարարտութիւն մեր ստամոքսներու և ի պայծառութիւն հայ ազգի: Համբոյրներ ձեր ամեն սիրելութեան մեր սիրելութենէն“: Սոյն պայմանագիրը ստորագրուած է երկու կողմէն ևս, զի դրօշակը իւր ծրագրին մէջ իսկ տողեր գտաւ, որոնք նոյնը կը հաստատեն լիովին: Երկու կողմերն էլ գոհ սրտով հաշտ են և երջանիկ: Դրօշակը իւր պատասխանին հետ ուղարկել է նաև մի դգալ և մի կաղամբ մի օղակով միացած, իբրև զոյգ գլուխներ նոյն հայ մտածմունքներով ծանրացած:

Այս դաշնակցութիւնը յաւերժացնելու համար դաշնակիցները պատուիրել են ճենապակու վրայ մի հրաշալի պատկեր, որ վաճառւում է Եւրոպական բոլոր գլխաւոր քաղաքներում: Ասում են թէ Սուլթանը այդ պատկերի վրայ Թզուկի դէմքը տեսնելով թոյլ է տուել ազատ մուտք ունենալ Տաճկաստան:

Պատկերի բովանդակութիւնը հետևեալն է: Ձախ կողմը կանգնած են բոլոր դրօշակեան շէֆերը, որոնցից մէկը ներողութիւններ է խնդրում, միւսը չոքած՝ կոտրում է տէռօրական դաշոյնը դէմը ժպտադէմ կանգնած կարճահասակի առջև, որ մատուցանում է նրան իւր երկրորդ մեղայականը (առաջինը գընաց Սուլթանին): Աջ կողմը կան կեղծ թերթի դիւանագէտ ջենտլմենները որոնցից մի քանիսը լեզուները հանած՝ ջանում են մաքրել մի խորհրդաւոր վճռագիր որի վրայ խեթ նայում է մըկնանման Թզուկը: Դրօշակներ թմբուկ և աղաղակ, ամեն ինչ կատարեալ է:

Démon.



ՄԱՀԱՐՈՒԹ ՆԱՄԱԿՆԵՐ

Հայ ազգի „Մեծ մարդը“ մէկ աննման զէնք է գտած, մի զէնք որ մինչև այժմ եւրոպական ոչ մի գիւտ-անողի խելապատակէն իսկ չէ անցած, և հիմակ ալ երբ լսեն թէ խընդիրն է ինչ է, դարձեալ կարող չը պիտի ըլլան հասկընալ մեծ գաղտնիքը: Ահա թէ ինչ է խնդիրը: Մի քանի ամիս առաջ Արեգական որդի, պարսից Շահնշահ, դաշոյնի մը հարուածին տակ վար կիյնար դաւադիր ձերբակալեցին, դատաւորները հարցը ամեն կողմէն քննեցին, բայց ոչինչ չկարողացան դուրս բերել. եկուր տես որ, հայոց „Մեծ մարդը“ Շահընշահի ուղարկուելու համար մի մեծ նամակ կը պատրաստէր, ու այդ է եղած նրա մահուան պատճառը: Չը հասկցա՞ր, ընթերցող. կը ծիծաղիս...: Ահա քեզ մի ուրիշ օրինակ. հայոց „Մեծ մարդը“ իր մահառիթ նամակների այս առաջին փորձէն խրախուսուած՝ մի երկրորդ նամակ սկսաւ պատրաստել, և իբր բաց նամակ՝ իւր ամսաթերթի մէջ կը հրատարակէ այս տիտղոսով „բաց նամակ Լօպանօֆ իշխանին“: Խեղճ Լօպանօֆ իշխանը իր գլխուն գալիք փորձանքին անտեղեակ՝ իր վեհափառ կայսեր ամենազօրման թոյլտուութեամբը մի և նոյն վակօնի մէջ նստած Վիեննա կը գնար, երբ հայոց „Մեծ մարդու“ նամակը ձեռքը կը հասնի և առաջին տողէն... ....արդէն կաթուածահար վար կիյնար այլ ևս չկանգնելու համար:

Մենք հիմա, բոլորովին վստահ այդ նամակներու մահազդեցիկ յաջողութեան վրայ, կը խնդրենք հայոց ազգի „Մեծ մարդէն“ որ բարեհաճէր մի փոքրիկ երկտող ալ Սուլթան Անմիտին գրել, և իբր նոր Մեծն Աղեքսանդր՝ հայոց հարցի գորդեան հանգոյցը մի հարուածով լուծէր լմնցնէր:

ՆՇԱՆԱՒՈՐ ԾԱՆՈՒՑԱԳԻՐ ՄԸ.

Մենք ստացանք ծանուցագիր մը կարգ մը անձերէ, որոնք չեն կրնար խոստովանիլ իրենց արհեստը, վասնզի այդ պաշտօնը ստացած են Լուսնեզջիւրի Տխմարութեան Պալատէն:

Այդ ծանուցագիրը կը ծանուցանէ. —

„Ուխտադրուժ խարդախներու խորհրդին մէջ վճիռ դրուեցաւ՝ թէ մեր երեսին շատ կը վայլէ Յովսէփ գեղեցկին եղբայրավաճառ եղբայրներուն դերը. թէ բիւզանդական լուսնոտային նախախնամութիւնը և բօսֆօրային ամրան արևի ոսկէ անձրևը վերին ներշնչում մը ազդեցին մեր սև սրտերուն: Մենք որոշեցինք մեզմէ փախուստ տալ փառքէն, մեզ իրեն անարժան համարող պատուէն, մեր ճիգերուն նպատակ եղած՝ բայց աքցի տալ դիրքէն, ինչպէս ալ որ ըլլայ առնել սոսկալի վրէժ: Ապա յանուն մեր անամօթութեան, մեր գանգերու մէջ բոյն դրած տգիտութեան, յանուն մեր սուրբ անիրաւութեան և սև արաքներուն, յանուն մեր ստացած ու ստանալիք վարձքերուն, յանուն խաբեբայութեան, երեսպաշտութեան և եսամոլութեան — ուխտեցինք որ պէտք է մեր մէջէն դուրս վանել այն ամենը, ինչ կը յիշեցնէ արդարութիւնը, պատիւը, ճշմարտութիւնը, ինչ կը համարուի շիտակութիւն, ազնուութիւն ու գիտակցութիւն, ինչ կը ճանչուի իրաւունք, ուղղութիւն և լուսաւոր միտք: Ուխտեցինք այդ ընել, վասնզի 1) լոյսի տակ երևան չեկող նպատակներ ու դաւեր մեզ այդպէս կը թելադրեն՝ հանելու համար այն փառքին, այն պատւին և այն դիրքին, որ մեզմէ կը փախին, 2) վասնզի նոյնպէս բիւզանդական նախախնամութեան ներշնչումը կը թելադրէ ամեն ոլորապտոյտ ճամբաներով հանիլ այն կէտ նպատակին, որ թէ՛ մեր ամենուս և թէ՛ Լուսնեզջիւրի Տխմարութեան Պալատան ամենամեծ նպատակը կը կազմէ այսօր:

Ուստի, յանուն կեղծիքի և նենգութեան, որ մեր ձեռքին այսօր մեծ գործիք մըն է, յանուն նոյնպէս վերև մեր ամեն ըսածներուն կը հաստատեմք, որ մենք ալ գոյութիւն մ՚ ենք որոյ մասին մինչ այսօր թերևս կասկածներ կային, և որ մեր այդ գոյական մարմինը բացառական դիրք մը ունենալով և դրական խարդախութեան համար բացասական գործերու սկսելով, — այլ ևս տեղի չըկայ ուրիշ մարմնոյ մը գոյութեան և ամեն ուրիշ մարմիններուն շունչն ու սեփականութիւնը, ոյժն ու գործն այլ ևս այսուհետև պիտի նկատուի մեր մէջ ամփոփեալ և կլանեալ առժամակեայ կերպիւ՝ մինչև որ ժամը հնչէ երբ ալ խայտարակելով կը փլցունենք այն հօյակապ ազգային շէնքը, որ մինչ այսօր շինուեցաւ և որոյ կործանման համար անհրաժեշտ գործիքներ ենք մենք՝ շնորհիւն այն ամենի՝ ինչ կիշխէ մեր աննման Բիւզանդիոնի մէջ:“

Մենք կը շատանանք միմիայն արձանագրելով այդ նշանաւոր Ծանուցագիրը, որ աննըման գոհարի մը արժէք ունենալով՝ ալ լուսաբանութեան մը պէտք չունի.

Ծանուցագրին իսկականը կը գտնուի „Ապտակի“ լրաբեր սատանային „Ջաւեշտական Դեւանատանը“:

ԴԷՍ ՈՒ ԴԷՆ

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ԿՌԻԶԻՍԸ ՌՈՏՈՍԹՕՅԻ ՄԷՋ

Ռոտոսթօյէն կը հեռագրեն մեզ. — Ձմերուկի գործառնութիւնները բոլորովին դադարած են, ձմերկավաճառները յետին թըշուառութեան մէջ են, ձմերուկով բեռնաւորուած առագաստանաւերը կարգիլուին Կ. Պօլսոյ նաւահանգիստը մտնել:

***

Կ. Պօլսէն կը հեռագրեն. — Այսօր կայսերական հրովարտակով քաղաքիս մէջ որքան ձմերուկ և սեխ կար հաւաքեցին և ծովը լեցուցին, որովհետև ռումբանման ըլլալով սարսափ կազդէին խլամ ժողովուրդի վրայ:

***

ՀՐԱԽԱՂՈՒԹԵԱՆ ՓՈՐՁԵՐ

Սուլթան (դէպի պատուհանը վազելով). — Նազիմ, եկուր նայէ, սա տեսնուած փայլատակումները ինչ բաներ են:

Նազիմ. — Ոչինչ, տէր արքայ, ռումբերու հրախաղութեան փորձեր կը կատարեն:

Սուլ. — Ի՞նչ առթիւ:

Նազ — Ձեր վեհափառութեան տարեդարձին առթիւ:

Սուլ. — Քանի որ այդպէս է, ի՞նչու կեցեր ես հոս, շո՛ւտ, գնա՛ և յանուն Մուհամմէտի զոհաբերութիւն ընել տուր Ալլահին: Ժողովրդի տրամադրութենէն պէտք է օգտուիլ, թող բոլոր հաւատացեաները խրախճանքներով ուրախանան ու հրճուին կեավուրներու արեան մէջ:

***

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

Աշկակարի մը խանութին մէջ. — Օրթախ ալ ասկէ վերջ հոգ մի ըներ, տարին տասներկու ամիս պիտի կրնանք բանիլ:

— Ինչէ՞ն, ինչ կայ քի:

— Մըեր չիմացար, բիւթին չարշըլըն գիտէ նէ:

— Ըչ, ես չեմ գիտեր, ըսէ նայինք ինչ է:

— Սուլթանը Պօլիսը Ռուսական մեծ ընկերութեան մը մօտ սիկուրէթան (ապահովութագրութիւն) է դրեր:

— Ընտո՞ր, ինչ պայմանով:

— Վօսփորի ջրերը անոր տալով:

***

Շատեր հետաքրքիր են իմանալ՝ թէ այսքան կոտորածներէ, այսքան արիւնհեղութիւններէ վերջ Եւրոպական տէրութիւնները ինչո՞ւ չեն պատժեր այդ արիւնախում Սուլթանը:

Որովհետև՝ նա իր կեանքը և գահը նոյն այդ Եւրոպական տէրութիւններու ապահովագրել տուած է, և այնպիսի մեծկակ գումարով մը, որ եթէ մէջտեղէն վերցնեն, շատ սուղի պիտի նստի Եւրոպային:

ԲԱԶԷ.

ՔՐՔԻՋՆԵՐ

Ալֆաից մինչև Օմիկրոն և սրանց ընկեր փիլիսոփաները „աստուածարեալ հայրապետ Կլատսթօնի“ ներկայանալով, տիրացութեան աստիճան են ստացել: Կեցցէ Հայաստան:

***

Կանանց և Մանկանց խողխողիչներ.

Les égorgeurs de femmes et d'enfants

Eh... Camarades ... en avant ... du courage ... voici l'ennemi

Էյ, Բարեկամներ, ... օն, յառաջ ..... քաջալերվեցեք .... սե�թշնամին ..

Hein...! vous tous qui nous regardez... admirez comme nous sommes braves.

Ով դուք ամենքդ որ նայեցեք .... հիացեցեք մեր քաջությունը ..

Oh... Attention .... voila un Hentchakiste.. sauve qui peut...

Ույ .... Զգոյշ .... ահա Հնչակիստ մը ... Շո՜ւտ ... փախիք ...



L'invisible est visible grâce aux rayons de Röntgen.

Անտեսանելին տեսանելի է շնորհիվ Ռենտգենի Ճառագայթների.

„ԱՊԱՏԱԿ"-Ի ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ.

ՐԷՊՈՒՍ ԹԻՒ 6

Նապը



ԹԻՒ 5 ՐԷՊՈՒՍԻ ԼՈՒԾՈՒՄԸ.

Ուրալ-Լ-ինի-ան կար-լի-է-կառք-և-կառա-վա-ուեթ-ու պահէ-լ-երբ-մարդիկներ-ի մէջ կա-սկայ-ձու-ատէ-լու-թիւն-նէ-օր-կը-տիր-է: — Ուր ալ լինի անկարելի է կարգ և կառա-վարութիւն պահել երբ մարդիկների մէջ կաս-կած ու ատելութիւնն է որ կը տիրէ:

Անցած օրը Ապտիւլ Համիտ իւր հարեմի մէջ տեղը ուշագնաց ընկել է վար, կանանց գլուխները ռումբեր կարծելով: Հրամայուած է որ տարփալի հուրիները ննջելու ժամանակ գլուխները ծածկեն վերմակներով և աւելորդ թնդիւններ չը հանեն, հակառակ պարագային կպատժուին իբրև անարշիստներ:

***

Սուլթանը մեծ բաւականութեան մէջ է որ Տաճկաստանն էլ եւրոպական տէրութիւնների շարքն անցաւ, որովհետև այդտեղ էլ անար-շիստներ են երևան եկել, որոնք վրդովում են հասարակական հանգստութիւնը: Մօտ ժամանակներս Ոսկեղջիւրի Արուն մտադիր է բոլոր եւրոպական տէրութիւններին հրաւէր կարդալ որ միասին միջազգային բացառիկ օ-րէնքներ մշակեն անարշիստների դէմ:

***

Պօլսի Դաշնակցական կոմիտէի նամակը Դաշնակցական բիւրոյի, „Սեպտեմբերի 26. Պօ-լիս. Երկար ամիսներէ ի վեր ճգնեցանք Հընչակ-եաններուն Զէյթուն արած ապստամբութեան պէս ապստամբութիւն մը ալ հոս ընել և կը կարծեմ թէ յաջողեցանք՝ ոչ թէ անոնց հա-ւատարիլ, այլ անոնցմէ ալ անցնիլ: Ալ թող չպարծենան Զէյթունով ու մեր նախանձն ալ չգրգռեն, զի մենք ալ Պօլիս ունինք: Եւ ա-րածնին ինչ էր որ. անոնք զօրանոցը պաշա-րեցին, — մենք Օթթոման պանկը, որ աւելի կա-ևոր է. անոնք քանի մը հարիւր հրացան ունէին մենք քանի մը հարիւր ռումբ, որոնց գործածո-թիւնը հայերիս մէջ առաջին անգամ մեզ կը-պատկանի: Անոնց պատերազմին մէջ քանի մը հայ ընկաւ միայն, մեր ապստամբութեան մէջ 6000 հայ մեռաւ. չհաշուելով տասնեակ հա-

զար գաղթականները: Բանակցութենէ վերջ անոնց հերոսներ ազատ անցան Եւրոպա, մեր քաջերն ալ բանկը մտնելէ և կէս ժամէն աւելի հոն պատելէ վերջ, փառաւոր յաղթանակով մը, այսինքն զէնքերնին վրանին, թողուցին բանկան ու դուրս ելան, առանց մինչև իսկ ղուրուշ մը գողնալու: Կը թողում այն թէ մեր ռումբերը որչափ վախցուցած են զՍուլթան: Ալ անհոգ ենք, պատմական դէպք մը կատարեցինք, անցեալ մը ունինք, եւ ասկէ վերջ եթէ Հայաստան ազատի, միշտ Պոլսոյ ապստամբութեան ենք պարտական:“

Démon.

Փոքրիկ հայ ազգի դիւանագէտը, որ վարում է իւր քաղաքականութիւնը կրկնակի լեզուներով պաշտպանելով հայ ազգը, որ Տելֆեան տաճարի պատգամախօսների պէս, Անգլիական եռոտանու վրայ նստած, մարգարէանում է աշխարհի բաղդը և հովանաւորում է հայ ազգին, որ իւր եռոտանու վրայից պապական նամակներ է թխում ու տպագրում, հերթով Լօբանովից սկսած մինչև Սօլզպըրիէն, որոնք երևի, աւաղ, տեղեկութիւն չունին այդ նամակներից, որ մեծ պատգամախօսը, որին, աւաղ, դեռ բաւական միամիտ լսողներ ու հասկացողներ կան, մօտ օրերս կրկնել է մի հանճարեղ միտք ևս, որ շատերը յափշտակեցին բուռն ծափահարութեամբ, իբրև չնաշխարհիկ մի գիւտ, աննկատ պատգամախօսի անշահասէր ղրթօնքներից.

Հայ ողորմելիների քուրմը յայտնել է թէ դաշնակցականները աննման գործ կատարեցին բանկի վրայ յարձակելով, և թէ նրանց այդ արածը գերազանց է հնչակեանների ամբողջ գործերից: Նա որի ամբողջ պաշտօնն է եղել եւրոպական դիպլօմատների շէմքերը աւլել, երևակայելով թէ նրանց հետ խորհրդակցում է, նա, որ խորիմաստ հանճարով Կոլոմբոսին թամբել էր թէ եւրոպական քաղաքականութիւնը պէտք է փրկէ Հայաստան, այժմ նոյն խոհեմաստութեամբ թափանցում է թէ դաշնակցականները շատ լաւ են արել: Բայց այսպիսի հակասութիւններ միշտ ներելի են, որովհետև պատգամախօս քուրմը միշտ աստուածութեաց կամքն է բարբառում, նայելով թէ քամին ո՞ր կողմից է փչում.

Կրակը դեռ վառ է, կանգուն է դեռ խաչակողական եռոտանին, և նրայ վրայ հինաւուրց պատգամախօսը, որ բաղդ գուշակելով դրամներ է որսում:

Փոքրիկ հայ ազգի, մեծ դիւանագէտ:

Démon.

ԻՄ ՊԱՐԿԻՑ

Մեծ ազգերն իրանց յեղափոխութիւնների միջոցին փչում էին պղնձէ փողը. հայ բիւզանդասնունդ „նշանաւոր գործիչներ“ կան, որ հետևում են այդ յաղթական օրինակին և յաղթաբար փչում են... ոսկէ փողը:

* * *

Հատուած մի „նշանաւոր գործիչի“ նշանաւոր ճառից. —

„Պարոնայք, պիտի աղէկ հասկընաք սա ճըշմարտութիւնը թէ՝ միութեան հիմք պիտի ըլլայ ո՛չ մի որոշ քաղաքա-տնտեսական դաւանանք չունենալը քաղաքա-տնտեսա-յեղափոխական գործին մէջ. այլ, ինչպէս մեղուն այլ և այլ ծաղիկներէն հիւթ կը հաւաքէ, բազմազան ուղղութիւններէ մաս-մաս պիտի առնել և բազմազանէն ընդհանուր հիմք մը շինել, որ չունի որոշ ուղղութեան և որոշ յատակագծի դիրք մը, և կը հանդիսանայ հիմք մը, որոյ վրայ ամէն ինչ կը կենայ և ամէն ուղղութիւն խմբվելով կը ձուլուի, առանց որ և է ուղղութեան, այլ սակայն կազմելով զօրաւոր միութիւն մը: Աս է ազգային մեծագոյն փրկութեան հաստատական խարիսխը, որ իր բազմաճիւղ արմատները գործուած սարդոստայնի մը պէս յաղթապանծ կը տարածէ մինչև խորին ծովու խոր յատակին խորունկ խորերը“.....

...?

* * *

Երբ տգէտին աջողվում է ասել մի խօսք, որ շատ աւելի անմիտ է, քան իր սովորական ասածները, նա կարծում է, որ այդ խօսքում ամփոփված է համաշխարհային ու հանրամարդկային ամենահասուն փիլիսօփայական միտքը:

* * *

Կաթօլիկների ասելով՝ նա, որ իր հոգին ծախում է սատանային, իր փրկութեան յոյսը դնում է միայն քաւարանի վրայ: Հարց — Որտե՞ղ և ինչո՞ւմն է քաւարանն այն մարդու, որ իր հոգին ծախում է Նազըմ փաշային...

* * *

Կեղծ գործիչը նրանով է տարբերվում ճըշմարիտ գործիչից, որ նրա գլխում իդէալի ու մտքի փոխանակ պտտվում են ամեն տեսակ հաշիւներ:

* * *

Իդիօտն աւելի զօրաւոր է իր իդիօտութեան մէջ և աւելի հաստատամիտ իր անմտութեան մէջ, քան գիտնականն իր գիտութեան մէջ և քաղաքագէտը քաղաքականութեան մէջ:

* * *

Երբ սրինգի ձայնն է լսվում՝ մարդիկ կան, որ անմիջապէս սկսում են պարել:

* * *

Փառքի համար ոմանք անում են մեծամեծ գործեր, ոմանք դառնում են մեծ հրդեհաձիգներ, ոմանք իրանք իրանց կախում են, ոմանք էլ խարդախում են ու խաբում: Նըպատակը միևնոյնն է, միջոցները տարբեր: Անկարելին — դրանց միութիւնն է:

* * *

Վատը վատին դէպի իրան է քաշում, ինչպէս մագնիս: Նրանք իրար փոխադարձաբար հասկանում են շատ լաւ, նրանք իրար փոխադարձաբար ատում են միշտ, նրանք իրարից փոխադարձաբար վախենում են և իրար փոխադարձաբար խաբում օրւայ մէջ ամբողջ քսան չորս ժամւայ ընթացքում: Նրանց միատեղի գործակցութեան իմաստն է — քանդել այն, ինչ կառուցում է մի երրորդը:

* * *

Մեծ է նա, ով հասկանում է ուրիշի մեծութիւնը:

* * *

Կը գայ մէկ օր, երբ մարդիկ չեն հասկանալ ներկայ ժամանակիս մարդկանց շատերի ո՛չ փոքրութիւնը, ո՛չ կիրքերը, ո՛չ դաւը, ո՛չ վատութիւնը: Դրանք կը լինեն ապագայի մարդու համար անցեալի հիւանդոտ մութ երազ:

* * *

Վատն ազնիւի տրամաբանութիւնը միշտ հակադիր կերպով է ըմբռնում, որովհետև երկուսն էլ նայում են ամեն բանի վրայ միշտ հակադիր պրիսմայի միջով:

* * *

Ռուսա — հայ և Թիւրքա — հայ բաղադրըեալ բառերի առաջին մասնիկները նետելով՝ կը ստանաք անուն միևնոյն ազգի — Հայ, որ գտնվում է երկու լծի տակ: Դուրս են պըրծել նորերս այն տեսակ „նշանաւոր գործիչներ,“ որ նետում են առաջին բառի վերջին մասնիկը և երկրորդ բառի առաջին մասնիկը և տեսնում են երկու անուն երկու տարբեր ազգերի — Ռուս և Հայ: Հետևութի՛ւն. — Ռուսահայերը Ռուս են, իսկ Թիւրքահայերը — Հայ և, ուրեմն, հայի անունով խօսել ու գործել կարող են միայն Թիւրքահայերը:

Դա նոյնն է, ինչ որ սոփեստն ասէր. — արևը, ծագում է արևելքում, բայց մայր է մըտնում արևմուտքում, ուրեմն... միևնոյն արևը չէ:

* * *

Երբ իմաստունը լալիս է՝ տմարը ծիծաղում է. վերջինի ծիծաղն աւելի տխրագդեցիկ է, քան առաջինի լացը:

* * *

Օրւայ մէջ գիշերը տևում է միայն յայտնի ժամեր. կան մարդիկ, որ կարծում են թէ գիշերը տևում է ամբողջ օրը և լոյս ցերեկն էլ են գողութիւն անում, ինչպէս գիշերը:

ԱՆՀԱՒԱՏԱՐԻՄ ՀԱՐՃԵՐ.

H. Papagalo-էն

Կ. Պոլսոյ Տաճիկը կը կարծէր, թէ կարող էր իւր հարճերի մօտ զուարճալի կեանք մը վարել:

Անոնցմէ մէկը՝ իւր խահվէն պիտի եփէր,

Մի ուրիշը՝ անուշեղէնները պիտի պատրաստէր,

Մի երրորդը՝ իւր վրայէն ճանճերը պիտի վոնտէր,

Մի չորրորդը՝ իւր ոջիլները պիտի քթուէր,

Եւ այսպէս շարքով, մէկը միւսէն...

Բայց միջին դարու մի Ֆրանսիական առած այսպէս կըսէ.- Ցիմար է նա որ վստահի կնոջ թեթևսոլիկի:

Իսկ իրականութեան մէջ մեր խեղճ Տաճիկը բոլորովին տարբեր կեանք մը ունեցաւ:

‘Նախ հայ հարճ՝ էր որ սկսաւ խօսիլ:

— Անշահ շան ցաւուկ. եթէ չը թողուս որ հարէմէդ դուրս գամ՝ աչքերդ պիտի փորեմ:

Այս նախատինքները լսելով Տաճիկին փաթթոցը գլխուն վրայ տարուբերուեցաւ:

— Ինծի՞, անշահ ցաւո՞ւկ. պոռաց կատաղած:

— Այո՛, շա՛ն ցաւուկ:

— Հասէք Ներքինիներ, կապկապէ ինձ այս տիկինը:

‘Ներքինիները հասան. բայց ապստամբ հարճէն բռունցքի և ճանկռտուքի փառաւոր տարափ մը ուտելէ վերջ, զգուշաւոր հեռաւորութեամբ շուրջանակի կը կանգնին:

Ամեն մարդ գիտէ որ չար օրինակի հետևողները ամեն տեղ շատ են:

Գանէացի հարճը կից մը կը նետէ Տաճիկին պոռալով:

— Ես ես չեմ ուզեր քեզ, խոֆած ծերունի:

— Ես դեռ երիտասարդ եմ, ծաղիկ հասակիս մէջ:

— Օ՜ գեղեցիկ ծաղիկը.... աղբանոցը նետելու վայել:

Հիմայ կը տեսնաս թէ ո՞վ է աղբանոցին վայելողը:

Եւ ահա ներքինիների կռնակին նոր տարափ մըն է որ կսկսի Գանէայի կողմէն, ըստ այն առածին թէ. երկու կռուարարներու մէջ միշտ միջամտողն է ծեծ ուտողը:

Շարունակելի.

ՀՆՉ. ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ.
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ԳԱՐԻԲԱԼԴԻ.
ԻՐ ԿԵԱՆՔԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ
ԹԱՐԳ. ԻՏԱԼԵՐԷՆԻՑ. ԳԻՆ 1 ՖՐ. 50 ՍԱՆՏ.

„ԱՊՏԱԿ“
ԵՐԳԻԾԱԲԱՆԱԿԱՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ

„ԱՊՏԱԿ“ը հրատարակելով մենք ուզում ենք հայ յեղափոխական գործող մարմնին տալ մի նոր զէնք — երգիծաբանի ապտակը:

„ԱՊՏԱԿ“ի լեզուն կը լինի միշտ անկեղծ, համարձակ, շիտակ, համոզված եւ խիստ: Իր հարուածի տակ նա կը դնէ ամեն հասարակական հիմնարկութիւն եւ հասարակական անձեր, որ հայ յեղափոխական առողջ գաղափարին եւ ժողովրդի շահերին վնասակար են:

„ԱՊՏԱԿ“ը հրատարակվում է ամիսը մէկ անգամ:

ԼՕՆԴՕՆ. „ՀՆՉԱԿԻ“ ՏՊԱՐԱՆ.